ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԹԱՅԳՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (REEBOK SPORT CLUB ARMENIA) ՄԻՋԵՎ

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) և «Թայգր Գրուպ» ՍՊԸ (Reebok Sport Club Armenia, այսուհետ՝ Reebok) միջև:

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը,

Նկատի ունենալով, որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ,

Կարևորելով ուսանողների և ապագա մարզիչ-մանկավարժների պրակտիկ ոլորտում կարողությունների զարգացումը և կարիերայի ձևավորումը,

Ընդունելով Ինստիտուտի և Reebok-ի պատրաստակամությունը պրակտիկ համատեղ հետազոտությունների իրականացման, ուսանողների պրակտիկաների կազմակերպման համատեքստում,

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները,

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

1.1 Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են.

2.1.1 Reebok–ում Ինստիտուտի ուսանողների և շրջանավարտների պրակտիկաների կազմակերպման աշխատանքներում,

2.1.2 Ինստիտուտի ուսանողների վերապատրաստումների և աշխատանքի տեղավորման գործում

2.1.3 Ինստիտուտի կրթական ծրագրերի մշակման, նորարարական, ծրագրերի համատեղ իրականացման շուրջ

2.1.4 Սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով,

2.1.5 Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում,

2.1.6 Լրացուցիչ և շարունակական մասնագիտական կրթական ծրագրերի համատեղ իրականացման ոլորտում,

2.1.7 Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում հետազոտությունների, փորձաքննությունների իրականացման ոլորտում,

2.1.8 Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու միջոցով:

2.2. Կողմերն իրականացնում են նաև՝

2.2.1"Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում համատեղ միջոցառումների կազմակերպում:

2.2.3.Միջազգային գիտական կոնֆերանսներ, սեմինարներ, ստեղծագործական բանավեճեր, խորհրդակցություններ:

2.2.4.Գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակում:

2"2"5"Կողմերի գրադարանային ֆոնդի համատեղ օգտագործում:

2. Համագործակցության սկզբունքները

3.1 Կողմերը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

3. Եզրափակիչ դրութեր

3.2.Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.3. Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

3.4. Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

3.5. Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

3.6. Սույն հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2024 թ. սեպտեմբերի ---ին:

3.7. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

5" Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Կողմ 1	**Կողմ 2**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	«Թայգր Գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11, 0070	ք. Երևան, Փիրումյանների 5, 0054
Ռեկտորի ժ/պ՝ Տիգրան Սիմոնյան	Հիմնադիր-տնօրեն՝ Արմենուհի Գևորգյան
Կ.Տ.	Կ.Տ.